ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____2019 ԹՎԱԿԱՆ N _ Ն

«ԵՐԵՎԱՆԻ N 16 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34- րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Երևանի N 16 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 282.210.04662) վերանվանել «Երևանի հ. 201 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Սահմանել, որ

1) Կազմակերպության գործունեության առարկան 1-ին աստիճանի՝ (1-4-րդ դասարաններ) և 2-րդ աստիճանի՝ (5-9-րդ դասարաններ), հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրերի իրականացումն է:

2) 2019/2020 ուսումնական տարվանից կազմակերպության ավագ դասարաններում մարման կարգով կազմակերպվում է սովորողների բնականոն ուսումնառությունը,

3) մինչև 2020թ.-ի հունիսի 1-ը Կազմակերպությունն իրավունք ունի սովորողների կրթությունը կազմակերպել երկարօրյա ռեժիմով՝ սովորողներին ապահովելով օրական երկանգամյա սննդով:

3. Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը Կազմակերպության կառավարման՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «դ » «ե» և «է» ենթակետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, իսկ 2020 թվականի հունվարի 1-ից հետո՝ Երևանի քաղաքապետարանին:

4. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպության կանոնադրության մեջ սույն որոշումից բխող փոփոխությունների կատարումը և պետական գրանցումը:

5. Սահմանել, որ «Երևանի հ. 201 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարման ու պետական գրանցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Երևանի N 16 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու մասին» N 575-Ն որոշմամբ հաստատված հավելվածի «121. «Դ.Վարուժանի անվան N 89 հիմնական դպրոց» կետից հետո լրացնել 122 –րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«122. «Երևանի հ. 201 հիմնական դպրոց»:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ սույն որոշման 2-րդ կետով սահմանված դրույթները տարածվում են սույն թվականի սեպտեմբերի 2-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆԻ N 16 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1 Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Երևանի N 16 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը բխում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 4-րդ հոդվածի պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ:

2019 թվականի հունվարի 21-ից ապրիլի 20-ը ընկած ժամանակահատվածում իրականացվել է Երևանի հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից կատարվել է ֆունկցիաների խանգարման աստիճանի գնահատում, նախկին՝ բժշկական ախտորոշումների հիման վրա կատարված գնահատումների փոխարեն: Երևանի N16 հատուկ դպրոցում սովորում են 202 աշակերտ 2019թ.-ի ապրիլի 20-ի դրությամբ: 170 սովորողների գնահատման արդյունքում պարզվել է, որ 100 երեխա

ֆունկցիայի խանգարում չունեն, հետևաբար չունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, 56 երեխա ունեն տեսողական ֆունկցիայի թեթև խանգարում, և 14 երեխա՝ միջին խանգարում, 32 սովորող չի գնահատվել, քանի որ ծնողները համաձայնություն չեն տվել: Քանի որ դպրոցում հիմնականում սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաներ, որոնցից 169-ը հիմնական դպրոցի աշակերտներ են՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը առաջարկում է 2019-2020 ուսումնական տարվանից «Երևանի N16 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Երևանի հ.201 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ կարգավիճակը հատուկ հանրակրթական դպրոցից փոխելով հիմնական հանրակրթական դպրոցի, ընդ որում,

նախագծով նախատեսվում է,

- Կազմակերպության գործունեության առարկան սահմանել 1-ին աստիճանի՝ (1-4-րդ դասարաններ) և 2-րդ աստիճանի՝ (5-9-րդ դասարաններ) հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրերի իրականացումը,
- 2019/2020 ուսումնական տարվանից կազմակերպության ավագ դասարաններում մարման կարգով կազմակերպել սովորողների բնականոն ուսումնառությունը,
- Կազմակերպությանն իրավունք վերապահել սովորողների կրթությունը կազմակերպել երկարօրյա ռեժիմով՝ սովորողներին ապահովելով օրական երկանգամյա սննդով: Սովորողների կրթությունը երկարօրյա ռեժիմով կազմակերպելը նաև փորձնական կլինի և դրա գնահատումը հիմք կհանդիսանա հետագայում այն այլ հանրակրթական դպրոցներում կիրառելու համար,
- 2020 թվականի հունվարի 1-ից հետո դպրոցի պետական կառավարման մարմնի լիազորությունները վերապահել Երևանի քաղաքապետարանին:

3 Ակնկալվող արդյունքը

Երևանում համընդհանուր ներառական կրթության անցման համատեքստում կկազմակերպվի սովորողների բնականոն կրթությունը՝ օգտագործելով դպրոցում առկա մասնագիտական պոտենցիալը: Սովորողների կրթության բնականոն գործունեությունն ապահովելու համար «Երևանի N16 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ունի շենքային բավարար պայմաններ, ուսումնամեթոդական հագեցվածություն, ինչպես նաև մանկավարժական համապատասխան կադրեր:

Բացի այդ, տարեկան ֆինանսավորումը որպես հատուկ դպրոց տարեկան կազմում է մոտ 175. 000 հազ. դրամ (1.000 հազ. դրամ X 175 սովորող), իսկ հիմնական դպրոցի դեպքում (կրթությունը երկարօրյա ռեժիմով կազմակերպելու դեպքում)՝ մոտ 94.000 հազ. դրամ (537 հազ. դրամ X 175 սովորող): Հաշվարկը կատարվել է 01.09.2019թ.-ի կոմպլեկտավորման հիման վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ

««Երևանի N 16 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

««Երևանի N 16 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերը տարեկան կնվազի մոտ 81. 000 հազ. դրամով, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ԵՐԵՎԱՆԻ N 16 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N/N	**Առարկության, առաջարկության հեղինակը, Գրությանստացմանամսաթիվը, գրությանհամարը**	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխություն**
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն 2019-05-27 N01/8-3/8594-2019	Առաջարկում է. 1.Նախագծի նախաբանում հղում է կատարված «Հանրակրթության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետին (4. ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ)), մինչդեռ անհրաժեշտ է հղում կատարել 3-րդ կետին (3. հիմնական դպրոց (1-9-րդ դասարաններ)): 2.Միաժամանակ, առաջարկում ենք Նախագծի նախաբանում	1.Ընդունվել է 2.Ընդունվել է	1.Որոշման նախագծի նախաբանն առաջարկին համապատասխան լրամշակվել է: 2. Որոշման նախագծի նախաբանում առաջարկին համապատասխան

		հղում կատարել նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածին:		կատարվել է լրացում:
2.	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն 2019-05-29 01/22.2/4536-19	Առաջարկում է 1. Նախագծի վերնագրում առաջարկում ենք «որոշումներում» բառը փոխարինել «որոշման մեջ» բառով: 2. Նախագծի նախաբանում «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետին կատարված հղումը առաջարկում ենք համապատասխանեցնել Նախագծով նախատեսված կարգավորումներին, քանի որ Օրենքի նշված հոդվածով նախատեսվում է, որ՝ «5.Ուսումնական հաստատությունը, ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի, լինում է՝.4) ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ).», մինչդեռ	1.Ընդունվել է 2.Ընդունվել է	1.Առաջարկին համապատասխան նախագծի վերնագրում կատարվել է փոփոխություն: Որոշման նախագծի նախաբանն առաջարկին համապատասխան լրամշակվել է:

		Նախագծի 2-րդ կետով սահմանվում է՝ ««Երևանի հ. 201 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան 1-ին աստիճանի՝ (1-4-րդ դասարաններ) և 2-րդ աստիճանի՝ (5-9-րդ դասարաններ)»: 3. Նախագծի 5-րդ կետում առաջարկում ենք «նախարարության ենթակայության» բառերից հետո լրացնել «դպրոցներ» բառը:	3.Ընդունվել է	3.Նախագծի 5-րդ կետում կատարվել է լրացում:
3.	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն 2019-05-21 01/15.1/4738-19	Առաջարկում է քննարկել «Երևանի հ. 201 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնադրի լիազորությունները Երևանի քաղաքապետարանին վերապահելու տարբերակը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.07.2002թ N 1392-Ն որոշման էությունը:	Ընդունվել է	Որոշման նախագծով նախատեսվում է 2020 հունվարի 1-ից լիազորությունը վերապահվել է քաղաքապետարանին:

4.	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2019-05-21 ԶԲ/ԱՌՊՍ/8007-19	Առաջարկում է 1.Նախագծի վերնագրում Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն «որոշումներում» բառը անհրաժեշտ է գրել եզակի թվով, 2.Նախագծի նախաբանում հղումը պետք է կատարել «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետին («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մաս), 3. Նախագծի 1-ին կետով սահմանվել է «Երևանի հ. 201 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանել՝ կազմակերպություն, սակայն Նախագծի մնացած դրույթներում կազմակրպությունը նշվել է ամբողջական անվանմամբ, 4. Նախագծի 5-րդ կետում «հայաստանի հանրապետություն» բառերը գրվել են փոքրատառերով:	1.Ընդունվել է 2.Ընդունվել է 3.Ընդունվել է 4.Ընդունվել է	1.Որոշման նախագծի վերնագիրը լրամշակվել է: 2.Որոշման նախագծի նախաբանը լրամշակվել է: 3.Որոշման նախագիծը ամբողջությամբ լրամշակվել է: 4.Որոշման նախագծի 5րդ կետում կատարվել է ճշտում:

5.	Երևանի քաղաքապետարան 2019-06-05 01/07-47155Հ	Առարկություններ և առաջարկություններ չկան:		Ընդունվել է ի գիտություն
6.	Արդարադատության նախարարություն 2019-06-24 01/27.2/13882-2019	Առաջարկում է 1. ««Երևանի N 16 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտմեբերի 26-ի N 2719-Ն որոշման մեջ փոփոխություն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի 2-րդ կետի 3-րդ ենթակետն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ նշված կետում խոսվում է	1.Ընդունվել է	1.Որոշման նախագծի 2-րդ կետի 3-րդ ենթակետը առաջարկին համապատասխան լրամշակվել է:

		իրավահաջորդության մասին, մինչդեռ նախագիծը վերաբերում է «Երևանի N 16 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության **վերանվանմանը:** 2. Նախագծի 4-րդ կետում «…փոփոխությունների կատարումը» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «և պետական գրանցումը» բառերը: Նույն կետում «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին» բառերը՝ փոխարինել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին» բառերով:	2.Ընդունվել է	2.Որոշման նախագծի 4-րդ կետը առաջարկին համապատասխան լրամշակվել է:
	ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի	1. Նախագծով առաջարկվում է «Երևանի N 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը		1.Կրկին անգամ հարցը քննարկվել է Երևանի քաղաքապետարանի հետ, վերջինիս կողմից

	վարչություն 2019-07-01 02/11.8/30139-2019	վերանվանել «Երևանի հ. 201 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, սակայն ներկայացված չէ վերլուծություն նշված դպրոցի մոտակայքում դպրոցների տեղաբաշխվածության և բեռնվածության վերաբերյալ, որի արդյունքում միայն հնարավոր կլիներ քննարկել բարձրացված խնդիրը:	1.Ընդունված է	ներկայացվել է Երևանի հ.16 հատուկ դպրոցի /այսուհետ՝ դպրոց/ մոտակայքում գտնվող դպրոցների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև առաջարկվել է դպրոցը միավորել հարևանությամբ գործող Երևանի Ներսես Մեծի հ.124 հիմնական դպրոցին: Նախարարությունը ներկայումս գտնում է ոչ նպատակահարմար դպրոցների միավորումը, քանի որ տեղի կունենա աշխատողների մասսայական կրճատում /Երևանի Ներսես Մեծի հ.124 հիմնական դպրոցը թերբեռնված է/, ինչը կբերի սոցիալական մեծ լարվածություն և դժգոհություններ: Նախարարությունը առաջարկում է միավորման հարցին անդրադառնալ 2019-2020 ուսումնական տարվա ավարտից հետո, երբ կհստակեցվի թիվ 201 հանրակրթական հիմնական դպրոցի երեխաների թիվը: Եթե դպրոցի ծնողները իրենց երեխաների կրթության համար ընտրեն իրենց բնակության վայրին առավել մոտ դպրոցներ,

		2. Նախագծի 3-րդ կետով առաջարկվում է «Երևանի հ. 201 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման որոշ լիազորություններ վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, մինչդեռ «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի համաձայն կրթության և գիտության նախարարությունը համարվում է պետական ավագ դպրոցների պետական լիազոր մարմինը: 3. Նախագծի 6-րդ կետով առաջարկվում է ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի 2179-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի ցանկից «7. «Երևանի N 16 հատուկ դպրոց» կետն ուժը կորցրած ճանաչել, մինչդեռ նշված որոշման 2-րդ հավելվածով սահմանված է տվյալ տարում վերակազմավորման ձևով վերակազմակերպված «Հայաստանի Հանրապետության պետական հատուկ	2.Ընդունվել է ի գիտություն 3.Ընդունվել է	դպրոցը կգնա մարման: 2. «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածը չի սահմանափակում կրթության, գիտության, մշակույթի և սպորտի լիզորությունները՝ այլ ամրագրում է պետական ավագ դպրոցների պետական լիազոր մարմին լինելու մենաշնորհը: անհարաժեշտության դեպքում հարցին նպատակահարմար է անդրադառնալ 2019-2020 ուսումնական տարվա ավարտից հետո: 3.Նախագիծը առաջարկին համապատասխան լրամշակվել է , հանվել է 6-րդ կետը:

		հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկը, այլ ոչ թե ներկայումս գործող հատուկ հանրակրթական հաստատությունների ցանկը: 4.Նախագծում անդրադարձ չի կատարվում «Երևանի N 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում սովորող, հատուկ կրթության կարիք ունեցող աշակերտների հետագա ուսումնառությունը կազմակերպելու խնդրին:	4.Ընդունվել է ի գիտություն	4. Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-200-Ն) տրամաբանության՝ որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները կարող են շարունակել իրենց կրթությունը նախատեսվող Երևանի N201 հիմնական դպրոցում: ՀՀ

				կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացած «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի» 2019 թվականից Երևան քաղաքի հանրակրթության համակարգում իրականացվում է համընդհանուր ներառական կրթություն: Համընդհանուր ներառաման համակարգում հանրակրթական դպրոցներում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին տրամադրվում են գնահատված կարիքներին համապատասխան

				կրթության առանձնահատուկ պայմաններ: Երևանի N16 հատուկ դպրոցում 2018-2019 ուստարում սովորել է 202 աշակերտ Գնահատվել է 170 սովորող: Գնահատման արդյունքում պարզվել է, 100 երեխա ֆունկցիայի խանգարում չունեն, հետևաբար չունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, 56 երեխա ունեն տեսողական ֆունկցիայի թեթև խանգարում, և 14 երեխա՝ միջին խանգարում, 37 սովորող չի գնահատվել, քանի որ ծնողները համաձայնություն չեն տվել: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները կարող են իրենց կրթությունը Երևանի

		5.Առկա են մի շարք տեխնիկական բնույթի թերություններ (օրինակ՝ նախագծի 3-րդ կետով նախատեսվում է		N201 հիմնական դպրոցում, որևէ այլ հանրակրթական դպրոցում, կամ Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N 14 հատուկ դպրոցում՝ առաջնորդվելով <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով (Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով) : 5.Նախագիծը լրամշակվել է այն համապատասխանեցնելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»

		կառավարման որոշ լիազորություններ վերապահել կրթության և գիտության նախարարությանը, ինչը չի համապատասխանում «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքին, հիմնավորման մեջ նույնպես առկա է անհամապատասխանություն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքին և այլն):	5.Ընդունվել է	օրենքին:
	ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն ԿԱ/134-2019 ՆԱԽԱՐԱՐԱԿ 16, 19, 20 օգոստոսի 2019 թ	Հարցի քննարկումը մերժել է	Ընդունվել է	Որոշման նախագիծը լրամշակվել է :

	ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆԻՍՏԻ Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն ԿԱ/148-2019 06.09.2019թ.	Առաջարկում է 1)քննարկել որոշման նախագծով սահմանվող ժամկետների համապատասխանեցման հարցը և ըստ անհրաժեշտության լրամշակել նախագիծը. 2) հստակեցնել նախագծի 2-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսվող սովորողների սննդի կազմակերպման համար ՀՀ պետական բյուջեից ակնկալվող ֆինանսավորման ժամկետները.	1.Ընդունվել է 2.Ընդունվել է	1.Որոշման նախագծում կատարվել են առաջարկին համապատասխան փոփոխություններ . 2..Որոշման նախագծի 2-րդ կետի 3-րդ ենթակետում կատարվել են առաջարկին համապատասխան փոփոխություններ .